Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2344 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2004 թվականի
մարտի 4-ի N 318-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԳՐՄԱՆ

1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայություններն իրականացվում են՝

1) տվյալ կազմակերպության տարեկան պայմանագրային գումարի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից տվյալ ենթամիջոցառման համար հաստատված ամսական համամասնության չափով.

2) պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով (օֆերտա):

1. Պայմանագրային գումարի տվյալ ամսվա համար հաստատված համամասնության սպառման կամ համապատասխան ծառայության թողունակության անբավարարության դեպքում բժշկական կազմակերպությունը բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում է հերթագրման եղանակով:

2. Երբ պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով (օֆերտա) ծրագրերով/միջոցառումներով/ենթամիջոցառումներով փոխհատուցվող կազմակերպությունների կողմից մատուցվող (մատուցվելիք) ծառայությունների ընդհանուր արժեքը գերազանցում է տվյալ ենթամիջոցառման մասով եռամսյակի

համար (աճողական) հատկացված գումարը 30%-ով, ապա տվյալ ծրագրերով/միջոցառումներով/ենթամիջոցառումներով ծառայություններ մատուցող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ծանուցումից հետո ծառայությունները մատուցվում են հերթագրման եղանակով: Սույն կետի մասով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով առանձին միջոցառումների կամ ենթամիջոցառումների մասով չափաքանակների սահմանված լինելու դեպքում որպես հաստատված տարեկան գումար ընդունվում է տվյալ միջոցառման կամ ենթամիջոցառման հաստատված մեծությունը:

3. Հերթագրման ենթակա չեն հետևյալ ծառայություններով և շահառուների իրականացվող բժշկական օգնությունը և սպասարկումը՝

1) անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների բժշկական օգնություն և սպասարկում.

3) հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնություն և սպասարկում.

4) նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ փորձաքննություն.

5) ծննդօգնություն և հղիության ախտաբանություն՝ հիվանդանոցային բժշկական օգնության մասով.

6) արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ բացառությամբ հետևյալ ծառայությունների՝

ա. մասնագիտացված ստոմատոլոգիական,

բ. արտահիվանդանոցային դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշմամբ սահմանված կարգով համապատասխան տարածքային զինվորական կոմիսարի կողմից ուղեգրված զորակոչային տարիքի

անձանց, դատաբժշկական, դատահոգեբուժական, դատաթմրաբանական և թմրաբանական փորձաքննության համար իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտությունների, անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտությունների,

գ. մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման,

դ. ախտորոշման ճշտման նպատակով լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ նեղ մասնագիտացված կենտրոններում և շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման.

7) չարորակ հիվանդությունների բուժում.

8) հեմոդիալիզի և պերիտոնեալ դիալիզի անցկացման.

9) դատաբժշկական, դատահոգեբուժական, դատաթմրաբանական և թմրաբանական փորձաքննության համար իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտություններ.

10) ախտաբանաանատոմիական.

11) անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտություններ.

12) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների բժշկական օգնություն և սպասարկում.

13) Հայաստանի Հանրապետության օլիմպիական և օլիմպիական ընտանիքի մարզաձևերի ազգային հավաքականների անդամների բժշկական օգնություն և սպասարկում:

4. Պացիենտների հերթագրումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

5. Էլեկտրոնային հերթագրումը կատարվում է էլեկտրոնային առողջապահության համակարգով՝ էլեկտրոնային ուղեգրման միջոցով:

6. Էլեկտրոնային հերթագրումը կատարվում է ըստ դիմելիության ժամկետների, էլեկտրոնային ուղեգրի հիման վրա, որն արտացոլվում է էլեկտրոնային առողջապահության համակարգի համապատասխան հաշվետվողական ձևի մեջ:

7. Պացիենտների հերթագրման դեպքում բժշկական կազմակերպությունը նրանց, անհրաժեշտության դեպքում, ապահովում է անվճար բժշկական (մասնագիտական) և դեղորայքային բուժման վերաբերյալ խորհրդատվությամբ:

8. Պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով էլեկտրոնային ուղեգիրը տալու օրվանից մեկ ամսվա ընթացքում պացիենտը կարող է դիմել է բժշկական կազմակերպություն: Բժշկական կազմակերպությունում հերթի առկայության դեպքում, հերթագրված պացիենտը, մինչև հերթագրմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու ժամկետը, պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով նույն բժշկական օգնությունը և սպասարկումն ստանալու համար կարող է դիմել նաև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող այլ կազմակերպություններ, ընդ որում՝

1) ուղեգրի ուժի մեջ լինելու (ուղեգիրը տալու օրվանից մեկ ամիս) դեպքում՝ նույն ուղեգրով, որի դեպքում պացիենտը դիմում է այն բժշկական կազմակերպությանը, որտեղ հերթագրված է և որի կողմից ընդունված էլեկտրոնային ուղեգիրը չեղարկվում է, և պացիենտը դիմում է այն բժշկական կազմակերպություն, որտեղ նախատեսում է ստանալ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում.

2) ուղեգիրը տալու պահից մեկ ամիսը լրացած լինելու դեպքում՝ նոր ուղեգրով: Ընդ որում, նոր ուղեգրի տրամադրման նախապայման է նախորդ ուղեգրի չեղարկումը:

9. Պացիենտների հերթագրումը կատարվում է ըստ դիմելիության ժամկետների, էլեկտրոնային ուղեգրի հիման վրա, որի վերաբերյալ հիվանդներին տրվում է հերթագրման թերթիկ (ձև N 1) կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով:

10. Բժշկական կազմակերպությունները հաստատում են պացիենտների հերթագրման ներքին կարգ՝ ներառյալ հերթագրման մասնագիտական հանձնաժողովի կազմը և գործունեության կանոնակարգը:

11. Հերթագրված պացիենտներին կարող է արտահերթ բժշկական օգնություն տրամադրվել համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում, որի մասին որոշումն ընդունվում է հերթագրման մասնագիտական հանձնաժողովի կողմից:

12. Հերթագրված պացիենտների հերթագրման ժամկետները պացիենտների համաձայնությամբ կարող են կրճատվել կազմակերպությունների պայմանագրային կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի տվյալ ծրագրի/միջոցառման/ենթամիջոցառման գումարների ավելացման, ինչպես նաև հերթագրված պացիենտների բժշկական օգնություն և սպասարկում չստանալու դեպքերում:

13.Հերթագրված պացիենտներն իրենց բժշկական օգնության ժամկետների փոփոխության մասին տեղեկացվում են գրավոր, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով:

14. Բժշկական կազմակերպությունը բնակչությանն ապահովում է հիվանդների հերթագրման կարգի, հերթագրման հանձնաժողովի գործունեության կարգի և կազմի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ:

15. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող՝ հերթագրված կամ հերթագրման ենթակա պացիենտներին հերթագրման կարգից դուրս՝ արտահերթ բժշկական օգնությունն իրականացվում է վճարովի հիմունքներով, տվյալ բժշկական կազմակերպությունում սահմանված կարգով և գներով, պացիենտի կամ նրա հարազատի տեղեկացված գրավոր համաձայնությամբ:»:

Ձև N 1

ՀԵՐԹԱԳՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ N ____

Ամիս, ամսաթիվ, տարեթիվ _____

Ազգանուն, անուն _____

Բնակության վայր_____

Նախատեսվող ընդունման ամսաթիվ _____

Պացիենտ կամ նրա ներկայացուցիչ _____

(ստորագրությունը)

Բժշկական կազմակերպության պատասխանատու _____ »:

(ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ